

ԲԱԺԻՆ 5. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ, ԼԵԶՈՒՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼԸ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԸ

Ազգային կազմի վերաբերյալ տվյալների ստացման հիմնական աղբյուր են հանդիսանում մարդահամարները, որոնք անցկացվում են տասնամյակը մեկ անգամ և, որով հնարավոր է դառնում տեղեկություններ ստանալ առանձին ազգությունների թվաքանակի, տեղաբաշխման, ինչպես նաև սեռատարիքային կազմի և կրթական մակարդակի վերաբերյալ: Սույն հրապարակման մեջ ներկայացված, ազգային կազմի, մայրենի և այլ լեզվի, կրոնական դավանանքի վերաբերյալ տվյալներն արտացոլում են համապատասխան իրավիճակները՝ 2015թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ:

Մեթոդաբանական պարզաբանումներ

5.1 Ազգությունը

Ինչպես և նախորդ մարդահամարին, ԼՂՀ 2015թ. մարդահամարի ժամանակ ազգային կազմի վերաբերյալ հարցի պատասխանը հարցաթերթում գրառվել է ըստ պատասխանողի (ռեսպոնդենտի) ինքնորոշման և ցանկության: Երեխաների ազգությունը որոշվել է ծնողների կողմից:

5.2 **Մայրենի լեզու** է համարվել հարցվողի մատնանշմամբ գրառված լեզուն: Եթե հարցվողը դժվարացել է նշել իր մայրենի լեզուն, ապա նշվել է այն լեզուն, որին նա բոլորից ավելի լավ է տիրապետում, կամ որը սովորաբար օգտագործում է իր ընտանիքում: Դեռևս խոսել չկարողացող երեխաների մայրենի լեզուն որոշվել է ծնողների կողմից:

5.3 Բացի մայրենի լեզվից տվյալներ են ներկայացված նաև այլ լեզվի վերաբերյալ, որին պատասխանողն ազատ տիրապետում է, այսինքն՝ կարող է տվյալ լեզվով կարդալ, գրել և ազատ խոսել, կամ միայն ազատ խոսել: Մեկից ավելի լեզուների ազատ տիրապետող հարցվողների համար գրառվել է միայն մեկ լեզու, որին նախապատվություն է տվել հարցվողը:

5.4 **Կրոնի, եկեղեցու կամ կրոնական որևէ ուղղության հետևորդ** հանդիսանալու (կամ ոչ) վերաբերյալ հարցի՝ անձի ինքնորոշման և ցանկության հիման վրա ստացված, պատասխանները բաշխվել են հարցաթերթում՝ հնարավոր պատասխանների ցանկում թվարկված 16 կրոնական ուղղությունների միջև, այդ թվում նաև այլ տարբերակի: Երեխաների կրոնական դավանանքը որոշվել է ծնողների կողմից:

Հաշվի առնելով մարդու անձնական կյանքի գաղտնիության պահպանման սկզբունքը, մարդահամարի հարցաթերթում ազգային կազմի, մայրենի լեզվի և կրոնական դավանանքի վերաբերյալ հարցադրումները կրել են կամավոր բնույթ, հնարավորություն ընձեռելով պատասխանողին հրաժարվել նշված հարցերին պատասխանելուց: